



Social Security

Ծերության նպաստներ

[www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov)

# Կապվեք Սոցիալական Ապահովության վարչության հետ

## Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, [www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov) պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրիւ տեղեկությունները: Այս կայքէջում նաեւ կարող եք՝

- դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստներ ստանալու համար,
- Գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցեն.
- ծանոթանալ Ձեր *Social Security Statement (Սոցիալական Ապահովության անձնական հաշվետվությանը)*,
- պահանջել Medicare-ի նոր քարտ և
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները.

Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերեն լեզվով:

## Չանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով

Բացի մեր կայքից օգտվելուց կարող եք նաև զանգահարել մեզ անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Որպես կանոն, զանգահարողներն ավելի կարճ են սպասում, եթե զանգահարում են շաբաթվա մեջ երեքշաբթիին հաջորդող օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ: Եթե Դուք խուլ եք կամ թույլ լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թե դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

## **Բովանդակություն**

**Սոցիալական ապահովության եւ ձեր կենսաթոշակային պլանները . . . . . 4**

**Ձեր ծերության նպաստները . . . . . 4**

**Ընտանեկան նպաստները . . . . . 10**

**Դուք ինչ պետք է իմանաք ծերության նպաստների պահանջնորին բավարարելու դեպքում . . . . . 13**

**Խոսք Medicare-ի մասին . . . . . 18**

## Սոցիալական ապահովության եւ ձեր կենսաթոշակային պլանները

Սոցիալական ապահովությունը հանդիսանում է գրեթե յուրաքանչյուր ամերիկյան աշխատողի կենսաթոշակային պլանի մասը: Եթե դուք մտնում եք Սոցիալական ապահովությանը ընդգրկված 96 տոկոս աշխատողների մեջ, ապա դուք պետք է իմանաք, թե ինչպես է գործում համակարգը եւ, թե դուք, կենսաթոշակի անցնելիս, ինչ պետք է ստանաք Սոցիալական պահովությունից: Այս գրքուկում բացատրվում է, թե ինչպես համապատասխանել սոցիալական ապահովության նպաստներ ստանալու համար սահմանված պահանջներին, ինչպես Ձեր աշխատավարձն ու տարիքը կարող են ազդել Ձեր նպաստի չափի վրա, ինչ պետք է հաշվի առնել, երբ որոշում եք թոշակի անցնելու ժամանակը և ինչու չպետք է Ձեր թոշակային եկամուտի հարցում հույսը դնեք միայն սոցիալական ապահովության նպաստների վրա:

Սույն գրքուկում ներկայացվում է Սոցիալական ապահովության ծերության նպաստների վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը առանց բոլոր հարցերին պատասխանելու մտադրության: Ձեր իրավիճակի վերաբերյալ որոշակի տեղեկատվության համար դուք պետք է խոսեք ձեր Սոցիալական ապահովության ներկայացուցչի հետ:

## Ձեր ծերության նպաստները

### Դուք ինչպես եք համապատասխանում ծերության նպաստների պահանջներին

Ձեր աշխատելու եւ սոցիալական ապահովության հարկերը վճարելու ընթացքում դուք ստանում եք «կրեդիտներ» ձեր Սոցիալական ապահովության նպաստների հաշվին:

Ծերության նպաստներ ստանալու համար անհրաժեշտ կրեդիտների քանակը կախված է նրանից, թե դուք երբ եք ծնվել: Եթե դուք ծնվել եք 1929թ.-ին կամ ավելի ուշ, ապա ձեզ անհրաժեշտ է 40 կրեդիտ (10 տարվա աշխատանքային ստաժ):

Եթե դուք դադարեցնում եք աշխատանքը նախքան նպաստների պահանջներին համապատասխանելու համար բավարար կրեդիտներ ունենալը, ապա կրեդիտները կմնան ձեր Սոցիալական ապահովության հաշվառմանը: Եթե դուք հետագայում վերադառնաք աշխատանքի, ապա դուք

կարող եք ավելացնել լրացուցիչ կրեդիտներ, որպեսզի համապատասխանեք պահանջներին: Թոշակային նպաստները չեն կարող վճարվել, մինչև Դուք չհավաքեք միավորների պահանջվող թիվը:

## **Որքա՞ն է կազմելու ձեր ծերության նպաստը**

Ձեր նպաստի վճարումը կախված է նրանից, թե դուք որքան եք վաստակել ձեր աշխատանքային գործունեության ընթացքում: Կյանքի ընթացքում ավելի բարձր հասույթները հանգեցնում են ավելի բարձր նպաստների: Եթե եղել են որոշ տարիներ, երբ դուք չեք աշխատել կամ ունեիք ցածր հասույթ, ապա ձեր նպաստների չափը կարող է ավելի ցածր լինել, քան եթե դուք կայուն աշխատած լինեիք:

Ձեր նպաստի վճարման վրա նաեւ ազդում է այն տարիքը, երբ դուք որոշեք անցնել կենսաթոշակի: Եթե դուք կենսաթոշակի անցնեք 62 տարեկանում (Սոցիալական ապահովության համար ամենավաղ հավանական տարիքը), ապա ձեր նպաստը կլինի ավելի փոքր, քան եթե դուք հապաղեք կենսաթոշակի անցնելու հարցում: Սրա մասին ավելի մանրամասն նկարագրված է էջ 7-ում եւ 9-ում:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.** Եթե Դուք առնվազն 60 տարեկան աշխատող եք և չեք ստանում սոցիալական ապահովության նպաստ, ապա Ձեզ ամեն տարի սոցիալական ապահովության հաշվետվություն է ուղարկվում, որում անփոփոխված է Ձեր վիստակած գումարը: 25 տարեկան դարձող աշխատողները փոստով կստանան մեկանգամյա հաշվետվություն: Եթե Դուք 18 կամ ավելի տարեկան եք, ապա հաշվետվությունը կարող եք ստանալ առցանց: Այս հաշվետվությունը կարող է կայուն ֆինանսական ապագա պլանավորելու համար արժեքավոր օգնություն լինել: Այն տրամադրում է Ձեր եկամուտների արձանագրությունը և ներկայացնում սոցիալական ապահովության Ձեր նպաստի մոտավոր հաշվարկը՝ ըստ թոշակի անցնելու տարիքի: Այն մոտավոր հաշվարկում է նաև հաշմանդամության այն նպաստը, որը Դուք կստանաք՝ նախքան թոշակի անցնելը իհստ անաշխատունակ դառնալու դեպքում, ինչպես նաև ընտանիքի անդամներին տրվող նպաստի չափը, որը Ձեր կինը/ամուսինը և Ձեր ընտանիքի մյուս իրավասու անդամները կստանան Ձեր մահվան դեպքում: Ձեր հաշվետվությունն ստուգելու համար կարող եք ստեղծել առցանց հաշիվ՝ այցելելով մեր կայքը՝ [www.socialsecurity.gov/mystatement](http://www.socialsecurity.gov/mystatement):

## **Դուք կարող եք ստանալ կենսաթոշակային նպաստի հաշվարկներ**

Դուք կարող եք օգտվել կենսաթոշակի առցանց հաշվարկիչից (Retirement Estimator)՝ ստանալու կենսաթոշակային նպաստի ակնթաթային և անհատականացված հաշվարկ, որը կօգնի Ձեզ պլանավորել Ձեր թոշակը: Կենսաթոշակի առցանց հաշվարկիչը ֆինանսական պլանավորման հարմար, ապահով և արագ գործիք է. նրա շնորհիվ Դուք ստիպված չեք լինի ձեռքով մուտքագրել եկամուտների մասին տարիներով կուտակված տվյալները: Հաշվարկիչը հնարավորություն է ընձեռում ստեղծելու «ինչ՝ եթե» սցենարներ: Օրինակ՝ Դուք կարող եք փոխել Ձեր «աշխատանքը թողնելու» ամսաթվերը կամ ապագայի ակնկալվող եկամուտները՝ թոշակի անցնելու տարբերակներ ստեղծելու և համեմատելու համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք *Online Retirement Estimator* («Կենսաթոշակի առցանց հաշվարկիչը», Հրապարակում թիվ 05-10510: Մատչելի է միայն անգլերենով:) կամ *How To Use The Online Retirement Estimator* («Ինչպես օգտվել կենսաթոշակի առցանց հաշվարկիչից», Հրապարակում թիվ 05-10511: Մատչելի է միայն անգլերենով:) հրապարակումը կամ այցելեք մեր կայքի հետևյալ էջը [www.socialsecurity.gov/estimator](http://www.socialsecurity.gov/estimator):

## **Լրիվ կենսաթոշակային տարիքը**

Եթե Դուք ծնվել եք 1944 թվականին կամ ավելի շուտ, ապա արդեն իրավասու եք ստանալու սոցիալական ապահովության Ձեր լրիվ նպաստը: Եթե Դուք ծնվել եք 1943-ից 1960 թվականն ընկած ժամանակահատվածում, տարիքը, որում կվճարվի լրիվ կենսաթոշակը, աստիճանաբար բարձրանում է մինչև 67-ը: Հետևյալ աղյուսակում ներկայացված է լրիվ կենսաթոշակային տարիքն՝ ըստ ծննդյան տարեթվերի.

**Սոցիալական ապահովության լրիվ նպաստները ստանալու տարիքը**

<b>Ծննդյան թիվը</b>	<b>Լրիվ կենսաթոշակային տարիքը</b>
1943-1954թթ.	66 տարեկան
1955թ.	66 տարեկան եւ 2 ամսական
1956թ.	66 տարեկան եւ 4 ամսական
1957թ.	66 տարեկան եւ 6 ամսական
1958թ.	66 տարեկան եւ 8 ամսական
1959թ.	66 տարեկան եւ 10 ամսական
1960թ. եւ ավել ուշ	67 տարեկան

**Ծանուցում.** Յանկացած տարվա հունվարի 1-ին ծնվածները պետք է հղում կատարեն նախորդ տարվան:

**Վաղաժամ կենսաթոշակի անցնելը**

Դուք կարող եք սոցիալական ապահովության կենսաթոշակային նպաստ ստանալ՝ սկսած 62 տարեկանից: Այնուամենայնիվ, Դուք կստանաք նվազեցված նպաստ, եթե կենսաթոշակի անցնեք նախքան լրիվ կենսաթոշակային տարիքը: Օրինակ՝ եթե թոշակի անցնեք 62 տարեկանում, ապա կստանաք 25 տոկոսով ավելի ցածր նպաստ, քան եթե սպասեք լրիվ կենսաթոշակային տարիքի լրանալուն:

Որոշ մարդիկ դադարում են աշխատելը 62 տարեկանում: Սակայն, դադարելու դեպքում՝ առանց հասույթի տարիները իրենց կենսաթոշակի անցնելու ժամանակ հավանաբար նշանակելու են Սոցիալական ապահովության ավելի ցածր նպաստներ:

**Ծանուցում.** Երբեմն առողջական պրոբլեմները մարդկանց ստիպում են ավելի վաղ անցնել կենսաթոշակի: Եթե դուք չեք կարող աշխատել առողջական պրոբլեմների պատճառով, ապա դուք պետք է դիտարկեք Սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստի համար դիմելը: Հաշմանդամության նպաստի չափը նույնն է ինչ լրիվ, չկրճատված ծերության նպաստինը: Եթե դուք ստանում եք Սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստ, երբ հասնում եք լրիվ կենսաթոշակային տարիքին, ապա այդ

նպաստները կփոխարկվեն ծերության նպաստների: Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրենք «Նաշմանդամության նպաստներ» հրապարակումը (Նրապարակում թիվ 05-10029-AM):

## Կենսաթոշակի ուշացած անցնելը

Դուք կարող եք որոշել շարունակելու աշխատելը՝ նույնիսկ ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը անցնելուց հետո: Այդ դեպքում դուք կարող եք բարձրացնել ձեր ապագա Սոցիալական ապահովության նպաստները երկու ճանապարհով:

Ձեր աշխատած յուրաքանչյուր տարին ձեր Սոցիալական ապահովության հաշվառմանը ավելացնում է հասույթի լրացուցիչ տարի: Կյանքի տեւողության ընթացքում ավելի բարձր հասույթը կենսաթոշակի անցնելիս կարող է նշանակել ավելի բարձր նպաստներ:

Ձեր նպաստը ինքնաբերաբար նաեւ կաճի որոշակի տոկոսով ձեր կողմից լրիվ կենսաթոշակային տարիքին հասնելու պահից մինչեւ ձեր կողմից նպաստներ ստանալը կամ մինչեւ ձեր 70 տարեկան դառնալը: Տոկոսային աճի չափը կախված է ձեր ծննդյան թվից: Օրինակ, եթե դուք ծնվել եք 1943թ.-ին կամ ավելի ուշ, ապա մեր կողմից կավելացվի 8 տոկոս տարեկան՝ ձեր լրիվ կենսաթոշակային տարիքից հետո Սոցիալական ապահովությունում ընդգրկվելու համար ձեր ուշացման յուրաքանչյուր տարվա համար:

**Ծանուցում.** Եթե դուք որոշում եք ուշացնել ձեր կենսաթոշակի անցնելը, **ապա 65 տարեկանում անպայման ընդգրկվեք «Medicare»-ում:** Որոշ հանգամանքներում բժշկական ապահովագրությունը ավելի է թանկանում, եթե դուք ուշացնում եք դրա համար դիմելը: «Medicare»-ի մասին այլ տեղեկատվությունը ներկայացված է էջ 18-20-ում:

## Կենսաթոշակի անցնելու ժամանակի մասին որոշում կայացնելը

Կենսաթոշակի անցնելու ժամանակի ընտրություն կարելու, սակայն անձնական որոշում է: Անկախ նրանից, թե որ տարիքում եք նախընտրում թոշակի անցնել, ցանկալի է նախապես դիմել Սոցիալական ապահովության վարչություն՝ հնարավոր տարբերակներին ծանոթանալու և տեղեկացված որոշում



կայացնելու համար: Որոշ դեպքերում կենսաթոշակի անցնելու ամսվա ձեր ընտրությունը կարող է հանգեցնել ձեր եւ ձեր ընտանիքի համար նպաստների ավելի բարձր վճարումներին:

Կենսաթոշակի անցնելու տարիքը որոշելիս կարելու է հիշել, որ ֆինանսիստ մասնագետները ասում են, որ կենսաթոշակի անցնելուց հետո հանգիստ զգալու համար ձեզ կպահանջվի ձեր նախակենսաթոշակային եկամուտի 70-80 տոկոսը: Զանի որ Սոցիալական ապահովությունը վերականգնում է նախակենսաթոշակային եկամուտի միայն 40 տոկոսը, ուստի կարելու է ունենալ կենսաթոշակներ, խնայողություններ եւ ներդրումներ:

Դուք պետք է դիմեք նպաստների համար նպաստները սկսելու ձեր նախընտրած ամսաթվից մոտ երեք ամիս առաջ: Եթե դուք լիովին պաստրաստ չեք կենսաթոշակի անցնելու համար, բայց մտածում եք անել դա մոտակա ապագայում, ապա դուք կարող եք ցանկանալ այցելել Սոցիալական ապահովության վեբ կայքը եւ օգտվել կենսաթոշակի անցնելու պլանավորման մեր հարմարավետ եւ տեղեկատու պլանավորող գործիքից՝ [www.socialsecurity.gov/retire](http://www.socialsecurity.gov/retire):

## **Ծերության նպաստներ այրի կանանց եւ այրի տղամարդկանց համար**

Այրի կանայք եւ այրի տղամարդիկ կարող են սկսել ստանալ Սոցիալական ապահովության նպաստներ 60 տարեկանում կամ 50 տարեկանում, եթե նրանք հաշմանդամ են: Եվ նրանք կարող են վերցնել կրճատված նպաստ ըստ մեկ հաշվառման, իսկ հետագայում՝ անցնել լրիվ նպաստի ըստ երկրորդ հաշվառման: Օրինակ, կինը կարող է ստանալ այրի կնոջ կրճատված նպաստ 60 կամ 62 տարեկանում, իսկ հետագայում անցնել իր լրիվ (100 տոկոսանոց) ծերության նպաստին՝ իր լրիվ կենսաթոշակին ացնելու ժամանակ: Կանոնները տարբեր են կախված իրավիճակից, ուստի ձեզ մատչելի լրացուցիչ տարբերակների մասին դուք պետք է խոսեք Սոցիալական ապահովության ներկայացուցչի հետ:

### Նպաստներ ընտանիքի անդամների համար

Եթե Դուք ստանում եք սոցիալական ապահովության կենսաթոշակային նպաստ, Ձեր ընտանիքի որոշ անդամներ նույնպես կարող են այն ստանալ: Նրանց թվում են.

- Կանայք (ամուսիններ), ովքեր 62 տարեկան կամ ավելի մեծ են.
- Կանայք կամ ամուսիններ, ովքեր 62 տարեկանից երիտասարդ են, եթե նրանք հոգ են տանում Ձեր վրա գրանցված մինչև 16 տարեկան կամ հաշմանդամ երեխայի մասին.
- Նախկին կանայք (ամուսիններ), եթե նրանք 62 տարեկան կամ ավելի մեծ են (տես «Նպաստներ ամուսնալուծված կանանց (ամուսինների) համար» էջ 13-ում).
- Մինչև 18 կամ 19 տարեկան երեխաները, եթե նրանք ցերեկային ուսուցման ուսանողներ են, որոնք դեռևս չեն ավարտել միջնակարգ դպրոցը, ինչպես նաև.
- Հաշմանդամ երեխաները, նույնիսկ եթե նրանք 18 տարեկան կամ ավելի մեծ են:

Եթե դուք դառնում եք երեխայի (ներառյալ որդեգրված երեխան) ծնող ձեր նպաստները ստանալուց հետո, հայտնեք մեզ երեխայի մասին, որպեսզի մենք որոշենք երեխայի իրավասությունը նպաստներ ստանալու համար:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.** *Երեխաների նպաստներ տրամադրվում են միայն չամուսնացած պախկներին: Մսկային որոշ դեպքերում նպաստ կարող է վճարվել հաշմանդամ երեխայի, ով ամուսնանում է իր նման մանուկ հասակից հաշմանդամ դարձածի հետ:*

### Կնոջ (ամուսնու) նպաստներ

Կինը (ամուսինը), որը չի աշխատել կամ ունի ցածր եկամուտ, կարող է իրավասու լինել կենսաթոշակի անցած աշխատողի լրիվ նպաստի կեսի չափով ստանալու համար: Եթե դուք բավարարում եք թեև ձեր ծերության նպաստների, թեև որպես կին (ամուսին) նպաստներ ստանալու պահանջներին, ապա մենք միշտ սկզբից վճարում ենք ձեր նպաստները: Եթե որպես կին (ամուսին) ձեր

նպաստները ավելի բարձր են, քան ձեր ծերության նպաստները, ապա դուք կստանաք նպաստների համակցությունը, որը հավասար է կնոջ (ամուսնու) ավելի բարձր նպաստին:

Եթե դուք հասել եք ձեր լրիվ կենսաթոշակային տարիքին եւ իրավասու եք կնոջ (ամուսնու) կամ նախկին կնոջ (ամուսնու) եւ ձեր սեփական ծերության նպաստը, ապա դուք կարող եք որոշել ստանալ միայն կնոջ (ամուսնու) նպաստները եւ շարունակել ուշացած կենսաթոշակի անցնելու կրեդիտներ հավաքելը Մոցիալական ապահովության ձեր սեփական հաշվառմամբ: Նետագայում Դուք կարող եք դիմել և ստանալ ավելի բարձր ամսական նպաստ՝ ելնելով հետաձգված կենսաթոշակի կուտակումների չափից:

Եթե դուք ստանում եք կենսաթոշակ այնպիսի աշխատանքի հիման վրա, որից դուք չեք վճարել Մոցիալական ապահովության հարկեր, ապա ձեր կնոջ (ամուսնու) նպաստը կարող է կրճատվել: Սույն հրապարակման էջ 17-ում կարող եք գտնել լրացուցիչ տեղեկատվություն Մոցիալական ապահովությամբ չընդգրկված աշխատանքից կենսաթոշակների մասին:

Եթե ամուսինները ցանկանում են ստանալ սոցիալական ապահովության կենսաթոշակային նպաստ՝ նախքան կենսաթոշակային լրիվ տարիքի լրանալը, ապա նպաստի գումարը կնվազի: Կրճատման չափը կախված է նրանից, թե երբ է անձը հասնում լրիվ կենսաթոշակային տարիքին:

Օրինակ,

- Եթե լրիվ կենսաթոշակային տարիքը 65 տարեկանն է, ապա կինը (ամուսինը) 62 տարեկանում կարող է ստանալ աշխատողի չկրճատված նպաստի 37,5 տոկոսը:
- Եթե լրիվ կենսաթոշակային տարիքը 66 տարեկանն է, ապա կինը (ամուսինը) 62 տարեկանում կարող է ստանալ աշխատողի չկրճատված նպաստի 35 տոկոսը:
- Եթե լրիվ կենսաթոշակային տարիքը 67 տարեկանն է, ապա կինը (ամուսինը) 62 տարեկանում կարող է ստանալ աշխատողի չկրճատված նպաստի 32,5 տոկոսը:

Նպաստի գումարը բարձրանում է ըստ տարիքի աճի մինչև լրիվ կենսաթոշակային տարիքում առավելագույնը 50 տոկոսը: Եթե լրիվ կենսաթոշակային տարիքը տարբերվում է այստեղ ներկայացվածներից, ապա 62 տարեկանում նպաստի գումարը կնվազի 32,5-ից մինչև 37,5 տոկոսը:

Այնուամենայնիվ, եթե ձեր կինը (ամուսինը) խնամում է երեխայի, որը 16 տարեկան է կամ հաշմանդամ, որը ստանում է Սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստներ ձեր հաշվառմամբ, ապա ձեր կինը (ամուսինը) անկախ տարիքից ստանում է լրիվ նպաստները:

### *Օրինակ.*

Մարի Աննը համապատասխանում է 250 դոլար գումարի ծերության կենսաթոշակի պահանջներին, իսկ ամուսնու նպաստը կազմում է 400 դոլար: Իր լրիվ կենսաթոշակային տարիքում նա ստանալու է իր 250 դոլարը, իսկ մենք իր ամուսնու նպաստից կավելացնենք 150 դոլար՝ ընդհանուրը հասցնելով 400 դոլարի: Եթե նա ստանա իր ծերության նպաստը նախքան իր կենսաթոշակային տարիքը, ապա երկու գումարներն էլ կրճատվելու են:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.** *Ձեր ներկայիս կինը/ամուսինը չի կարող կնոջ/ամուսնու նպաստ ստանալ, մինչև Դուք չդիմեք կենսաթոշակային նպաստ ստանալու: Այնուամենայնիվ, եթե Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրացել է, ապա Դուք կարող եք կենսաթոշակ ստանալու մասին դիմում ներկայացնել և ապա խնդրել, որ վճարումները ժամանակավորապես կասեցվեն: Այդ կերպ Ձեր կինը/ամուսինը կկարողանա ստանալ կնոջ/ամուսնու նպաստ, իսկ Դուք կխառնակեք ուշացված թոշակի միավորներ՝ մինչև 70 տարեկանը: Ամուսիններից միայն մեկը կարող է դիմել «միայն կնոջ/ամուսնու» նպաստ ստանալու:*

## **Առավելագույն ընտանեկան նպաստները**

Եթե դուք ունեք երեխաներ, որոնք բավարարում են Սոցիալական ապահովության պահանջներին, ապա յուրաքանչյուրը կստանա մինչև ձեր լրիվ նպաստի կեսը: Սակայն, գոյություն ունի գումարի սահման, որը կարող է վճարվել ձեզ եւ ձեր ընտանիքին՝ սովորաբար ձեր նպաստի վճարման 150-180 տոկոսը: Եթե ձեր կնոջը (ամուսնուն) եւ երեխաներին հասանելիք ընդհանուր նպաստները ավելին են, քան այս սահմանը, ապա նրանց նպաստները կրճատվելու են: Ձեր նպաստը փոփոխություն չի կրելու:

## Նպաստներ ամուսնալուծված կնոջ (ամուսնու) համար

Ձեր ամուսնալուծված կինը (ամուսինը) կարող է ստանալ նպաստներ ձեր Սոցիալական ապահովության հաշվառմամբ, եթե ամուսնությունը տեւել է առնվազն 10 տարի: Ձեր ամուսնալուծված կինը (ամուսինը) պետք է լինի 62 տարեկան կամ ավելի մեծ եւ չամուսնացած:

Նրա կողմից ստացվող նպաստների գումարը ազդեցություն չունի այն նպաստների գումարի վրա, որը ստանում եք դուք կամ ձեր ներկայիս կինը (ամուսինը):

Միեւնույն ժամանակ, եթե դուք եւ ձեր նախկին կինը (ամուսինը) ամուսնալուծվել եք առնվազն երկու տարի առաջ եւ ձեր նախկին կինը (ամուսինը) առնվազն 62 տարեկան է, ապա նա կարող է ստանալ նպաստներ, նույնիսկ եթե դուք կենսաթոշակի չեք անցել:

**Դուք ինչ պետք է իմանաք ձերության նպաստների պահանջնորին բավարարելու դեպքում**

## Դուք ինչպե՞ս եք գրանցվում Սոցիալական ապահովության համար

Ձերության նպաստների համար դուք կարող եք դիմել առցանց ռեժիմով [www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov) հասցեով կամ կարող եք զանգահարել մեր անվճար հեռախոսահամարով՝ **1-800-772-1213**: Կամ էլ դուք կարող եք հանդիպում նշանակել Սոցիալական ապահովության որեւէ գրասենյակ այցելելու եւ անձամբ դիմելու համար:

Կախված ձեր հանգամանքներից, ձեզ կպահանջվի ստորել նշված փաստաթղթերից մի մասը կամ բոլորը: Սակայն, ամբողջ տեղեկատվությունը չունենալու պատճառով մին հետաձգեք նպաստների համար դիմելը: Եթե դուք չունեք պահանջվող փաստաթուղթը, մենք կօգնեք ձեզ այն ստանալու հարցում:

Պահանջվող տեղեկատվություն.

- Ձեր Սոցիալական ապահովության համարը.
- Ձեր ծննդյան վկայականը.
- Ձեր «W-2» ձեւերը կամ ինքնագրադի հարկային հայտարարագիրը անցյալ տարվա համար.

- Ձեր զինվորական զորացրման մասին փաստաթղթերը, եթե դուք անցել եք զինվորական ծառայություն.
- Ձեր կնոջ (ամուսնու) ծննդյան վկայականը եւ Սոցիալական ապահովության համարը, եթե նա դիմում է նպաստների համար.
- Երեխաների ծննդյան վկայականները եւ Սոցիալական ապահովության համարները, եթե դուք դիմում եք երեխաների նպաստների համար.
- ԱՄՆ քաղաքացիության կամ օրինական բնակվող օտարերկրացու կարգավիճակի ապացույցը, եթե դուք (կամ նպաստի համար դիմող կինը (ամուսինը) կամ երեխան) Միացյալ Նահանգներում չեք ծնվել.
- Ձեր ֆինանսական հաստատության անվանումը, բանկի կոդը և Ձեր հաշվեհամարը, որպեսզի Ձեր նպաստն ուղղակիորեն Ձեր հաշվին վճարվի: Եթե Դուք չունեք հաշիվ ֆինանսական հաստատությունում կամ նախընտրում եք Ձեր նպաստը ստանալ կանխավճարված դեբիտային քարտով, ապա Դուք կարող եք ստանալ Direct Express® քարտ: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [www.GoDirect.org](http://www.GoDirect.org):

Ձեզ անհրաժեշտ կլինի ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները կամ փաստաթուղթը տված գրասենյակի կողմից վավերացված պատճենները: Դուք կարող եք փոստով ուղարկել կամ բերել դրանք Սոցիալական ապահովության գրասենյակ: Մենք կպատճենահանեք եւ կվերադարձնենք ձեր փաստաթղթերը:

## Բողոքարկելու իրավունքը

Եթե համաձայն չեք ձեր դիմումի վերաբերյալ կայացած որոշմանը, ապա դուք կարող եք բողոքարկել այն: Քայլերի բացատրության համար, որոնք դուք կարող եք ձեռնարկել, խնդրեք «*Բողոքարկման գործընթացը*» հրապարակումը (Հրապարակում թիվ 05-10041-AM):

Դուք կարող եք անձամբ բողոքարկել՝ Սոցիալական ապահովության վարչության անվճար օգնությամբ, կամ կարող եք օգտվել ներկայացուցչի օգնությունից: Մենք Ձեզ տեղեկություն կտրամադրենք այն կազմակերպությունների մասին, որոնք կարող են օգնել Ձեզ ներկայացուցիչ գտնել: Ներկայացուցիչ գտնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք «*Ներկայացուցիչ ունենալու Ձեր իրավունքը*» (Հրապարակում թիվ 05-10075-AM) հրապարակումը:

## **Եթե դուք աշխատում եք եւ միեւնոյն ժամանակ ստանում եք նպաստներ**

Դուք կարող եք շարունակել աշխատելը եւ դեռեւս ստանալ ծերության նպաստները: Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալու ամսում (կամ դրանից հետո) ձեր հասույթը չի կրճատելու ձեր Սոցիալական ապահովության նպաստները: Այնուամենայնիվ, ձեր նպաստները կկրճատվեն, եթե ձեր՝ մինչեւ ձեր կողմից լրիվ կենսաթոշակային տարիքը հասնելու ամիսների համար հասույթը գերազանցի որոշակի սահմանները: (Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը գտնելու համար նայեք 7-րդ էջում գտնվող աղյուսակը:)

*Այն գործում է հետեւյալ կերպ.*

Եթե լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք, ապա տարեկան սահմանը գերազանցող հասույթի յուրաքանչյուր 2 դոլարի համար նպաստներից կրճատվելու է 1 դոլար:

Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը հասնելու տարում ձեր նպաստները կրճատվելու են 1 դոլարով՝ տարեկան հասույթի սահմանը գերազանցող վաստակած յուրաքանչյուր 3 դոլարի համար մինչեւ ձեր կողմից լրիվ կենսաթոշակային տարիքի լրանալը: Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքի լրանալու պահին դուք կարող եք շարունակել աշխատելը եւ ձեր Սոցիալական ապահովության նպաստը չի կրճատվի անկախ նրանից, թե որքան եք դուք վաստակում:

Եթե տարվա ընթացքում ձեր հասույթը ձեր նախահաշվից ավելի բարձր կամ ցածր է, ապա անմիջապէս մեզ տեղյակ պահե՛ք, որպէսզի մենք կարողանանք ճշգրտել ձեր նպաստները:

Եթե դուք ցանկանում եք ստանալ լրացուցիչ տեղեկատվություն այն մասին, թե ինչպէս է հասույթը ազդում ծերության նպաստի վրա, խնդրե՛ք «*Բնչպէս է աշխատելը ազդում ձեր նպաստների վրա*» հրապակարկումը (Տրապարակում թիվ 05-10069-AM), որտեղ ներկայացված են տարեկան եւ ամսական հասույթի գործող սահմանները:

## **Հատուկ ամսական կանոնը**

Ձեր հասույթի նկատմամբ մեկ տարվա ընթացքում կիրառվում է հատուկ կանոն՝ սովորաբար կենսաթոշակի անցնելու ձեր առաջին տարում: Այդ կանոնի համաձայն դուք կարող եք ստանալ Սոցիալական ապահովության վճարում մինչեւ որոշակի սահմանը վաստակած որեւէ ամսվա համար՝ անկախ

ձեր տարեկան հասույթից: Եթե դուք ինքնազբաղ եք, ապա նաեւ հաշվի է առնվում ձեր գործարարությամբ կատարված աշխատանքը:

Եթե դուք ցանկանում եք ստանալ լրացուցիչ տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է հասույթը ազդում ձերության նպաստի վրա, խնդրեք «*Ինչպե՞ս է աշխատելը ապրում ձեր նպաստների վրա*» հրապակարկումը (Հրապարակում թիվ 05-10069-AM), որտեղ ներկայացված են տարեկան եւ ամսական հասույթի գործող սահմանները:

## **Ձեր նպաստները կարող են հարկման ենթարկվել**

Սոցիալական ապահովություն ստացողների մոտ մեկ երրորդը իր նպաստներից պետք է վճարի եկամտահարկեր:

- Եթե Դուք դաշնային եկամտահարկի հայտարարագիր եք ներկայացնում որպես «ֆիզիկական անձ», և Ձեր միասնական եկամուտը\* կազմում է 25,000-ից 34,000 դոլար, Դուք, հավանաբար, ստիպված կլինեք հարկ վճարել՝ սոցիալական ապահովության Ձեր նպաստի մինչև 50 տոկոսից: Եթե Ձեր միասնական եկամուտը\* գերազանցում է 34,000 դոլարը, ապա եկամտահարկ կգանձվի սոցիալական ապահովության Ձեր նպաստի 85 տոկոսից:
- Եթե դուք ներկայացնում եք համատեղ հայտարարագիր, ապա հնարավոր, որ պետք է վճարեք հարկեր ձեր նպաստների 50 տոկոսից, եթե դուք եւ ձեր կինը (ամուսինը) ունեք միացյալ եկամուտ\*, որը գտնվում է 32,000 եւ 44,000 դոլարի միջև: Եթե ձեր միացյալ եկամուտը\* կազմում է 44,000 դոլարից ավելի, ապա ձեր Սոցիալական ապահովության նպաստների մինչև 85 տոկոսը ենթակա է եկամտահարկի:
- Եթե դուք ամուսնացած եք եւ ներկայացնում եք առանձին հայտարարագիր, ապա դուք հավանաբար հարկեր եք վճարելու ձեր նպաստներից:

Յուրաքանչյուր տարվա վերջին մեր կողմից ձեր կուղարկվի *Social Security Benefit Statement* («Սոցիալական ապահովության նպաստների քաղվածք», Ձեւ «SSA-1099»: Մատչելի է միայն անգլերենով): Գույց տալով ձեր կողմից ստացված նպաստների գումարը: Դուք կարող եք օգտագործել այդ քաղվածքը ձեր դաշնային եկամտահարկի հայտարարագիրը լրացնելիս, որպեսզի պարզեք, թե արդյո՞ք դուք պետք է հարկեր վճարեք ձեր նպաստներից:



Չնայած, որ ձեզանից չի պահանջվում դաշնային հարկերի պահում, դուք կարող եք դա ավելի հեշտ գտնել, քան հաշվարկված եռամսյակային վճարումները:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Ներքին եկամուտների ծառայության անվճար հեռախոսահամարով՝ **1-800-829-3676** և պահանջեք 554 հրապարակումը՝ *Tax Guide for Seniors* («*Հարկային ուղեցույց տարեց անձանց համար*»), և 915 հրապարակումը՝ *Social Security And Equivalent Railroad Retirement Benefits* («*Սոցիալական ապահովությունն ու երկաթգծի աշխատողներին տրամադրվող համապատասխան նպատուները*»):

*\*1040* հարկային հայտարարգրում ձեր «միացյալ եկամուտը» հանդիսանում է ճշգրտված համահասուն եկամուտը գումարած չհարկվող տոկոսը գումարած ձեր Սոցիալական ապահովության նպատուների կեսը:

## **Կենսաթոշակներ Սոցիալական ապահովությանը ընդգրկված աշխատանքներից**

Եթե դուք ստանում եք կենսաթոշակ այն աշխատանքից, որտեղ դուք վճարել եք Սոցիալական ապահովության հարկեր, ապա այդ կենսաթոշակը չի ազդելու ձեր Սոցիալական ապահովության նպաստների վրա: Սակայն, եթե դուք ստանում եք կենսաթոշակ մի աշխատքնահից, որը ընդգրկված չէ Սոցիալական ապահովությանը՝ օրինակ, դաշնային քաղաքացիական ծառայությունը, նահանգային կամ տեղական իշխանության ոլորտի զբաղվածությունը կամ աշխատանքը արտասահմանում, ապա ձեր Սոցիալական ապահովության նպաստը կարող է կրճատվել:

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրեք *Government Pension Offset* հրապարակումը («*Կառավարական կենսաթոշակի փոխհատուցումը*», Հրապարակում թիվ 05-10007: Մատչելի է միայն անգլերենով:») կառավարության համակարգի աշխատողների համար, որոնք կարող են բավարարել Սոցիալական ապահովության նպաստների պահանջներին կնոջ (ամուսնու) հասույթի հաշվառմամբ եւ *Windfall Elimination Provision* («*Չնախատեսված եկամտի բացառման ապահովումը*», Հրապարակում թիվ 05-10045: Մատչելի է միայն անգլերենով:») այն մարդկանց համար, ովքեր աշխատել են այլ երկրում կամ կառավարության համակարգի աշխատողների համար, որոնք նաեւ բավարարում են իրենց իսկ Սոցիալական ապահովության նպաստների պահանջներին:

## Միացյալ Նահանգներից հեռանալը

Եթե դուք ԱՄՆ քաղաքացի եք, ապա դուք կարող եք ձանապարհորդել կամ ապրել արտասահմանյան երկրների մեծ մասում առանց ազդելու Սոցիալական ապահովության նպաստների պահանջներին ձեր բավարարելու վրա: Այնուամենայնիվ, կան որոշ երկրներ, որտեղ մենք չենք կարող ուղարկել Սոցիալական ապահովության վճարներ: Այդ երկրներն են՝ Կամպուչիա, Կուբա, Նյուսիսային Կորեա, Վիետնամ եւ նախկին Խորհրդային Միությունում եղած տարածքները (բացի Նայաստանից, Հստոնիայից, Լատվիայից, Լիտվայից եւ Ռուսաստանից): Այնուամենայնիվ, բացի Կուբայից եւ Նյուսիսային Կորեայից երկրներում որոշ իրավասու նպաստառուների համար կարող են արվել բացառություններ: Այդ բացառությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար դիմենք Սոցիալական ապահովության ձեր տեղական գրասենյակին:

Եթե դուք աշխատում եք Միացյալ Նահանգներից դուրս, ապա ձեր կողմից նպաստներ ստանալու հարցը որոշելու համար կիրառվում են տարբեր կանոններ:

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրենք *Your Payments While You Are Outside The United States* հրապարակումը («Ձեր վճարումները Միացյալ Նահանգներից դուրս եղած ժամանակ») հրապարակումը (հրապարակում թիվ 05-10137: Մատչելի է միայն անգլերենով):

## Խոսք Medicare-ի մասին

Medicare-ը առողջության ապահովագրության պլան է՝ 65 և բարձր տարիքի անձանց համար: Նախնական և երկկամային անբավարարություն ունեցող անձինք կարող են ցանկացած տարիքում Medicare ստանալ:

### «Medicare»-ը բաղկացած է չորս մասից

- Նիվանդանոցային ապահովագրությունը (Մաս A) օգնում է վճարել հիվանդանոցում ստացիոնար եւ որոշակի հետագա ծառայությունների համար:
- Բժշկական ապահովագրությունը (Մաս B) օգնում է վճարել բժիշկների ծառայությունների, ամբուլատոր ծառայությունների եւ բժշկական այլ ծառայությունների համար:

- «Medicare»-ի արտոնությունների պլանները (Մաս C) մատչելի են բազում ոլորտներում: «Medicare»-ի Մաս A-ով եւ B-ով մարդիկ կարող են ընտրել եւ ստանալ իրենց առողջապահական բոլոր ծառայությունները Մաս C-ով ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով:
- Դեղատոմսով դուրս գրվող դեղերի ծածկույթը (մաս D) օգնում է բժշկի կողմից բուժման համար նշանակված դեղամիջոցների վճարման հարցում:

Եթե Դուք արդեն սոցիալական ապահովության նպաստ չեք ստանում, ապա պետք է կապվեք մեզ հետ՝ Ձեր 65-րդ ծննդյան տարեդարձը լրանալուց մոտ երեք ամիս առաջ՝ Medicare-ի համար գրանցվելու: Դուք կարող եք գրանցվել Medicare-ի համար, նույնիսկ եթե մտադիր չեք 65 տարեկանում թոշակի անցնել: Լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք «Medicare» (Հրապարակում թիվ 05-10043-AM) հրապարակումը:

## Օգնություն ցածր եկամուտով «Medicare»-ի ծախսերով

Եթե դուք ունեք ցածր եկամուտ եւ սակավ միջոցներ, ապա ձեր նահանգը կարող է վճարել «Medicare»-ի ապահովագրավճարներ, իսկ որոշ դեպքերում՝ «ուղղակի կանխիկ» բժշկական ծախսերը, ինչպիսիք են պահումները եւ համատեղ ապահովագրությունը:

Միայն Ձեր նահանգը կարող է որոշել՝ արդյոք Դուք համապատասխանում եք Medicare-ի խնայողական ծրագրերից օգնություն ստանալու համար սահմանված պահանջներին: Պարզելու համար դիմեք բժշկական օգնության (Medicaid) Ձեր նահանգային կամ տեղական գործակալություն, սոցիալական ծառայությունների կամ բարեկեցության գրասենյակ:

## Հավելյալ օգնություն Medicare-ի դեղատոմսով դուրս գրվող դեղերի վճարման համար

Եթե Դուք ունեք ցածր եկամուտ (ըստ պետության սահմանած աղքատության մակարդակի) և սահմանափակ միջոցներ, Դուք կարող եք համապատասխանել Medicare-ի D մասի՝ դեղատոմսով դուրս գրվող դեղերի վճարման համար Հավելյալ օգնություն ստանալու պահանջներին: Այդ ծրագրում Սոցիալական ապահովության վարչության դերն է.

- օգնել Ձեզ հասկանալ՝ ինչպես կարող եք համապատասխանել Հավելյալ օգնության պահանջներին,
- օգնել լրացնել հավելյալ օգնության դիմումը և
- ընթացք տալ Ձեր դիմումին:

Եթե Դուք դիմեք Հավելյալ օգնության, մենք կսկսենք նաև Medicare-ի խնայողական ծրագրերի համար դիմելու գործընթացը, եթե Դուք մեզ չխնդրեք, որ դա չանենք: Ձեր համապատասխանությունը ստուգելու կամ դիմելու համար զանգահարեք Սոցիալական ապահովության անվճար հեռախոսահամարով կամ այցելեք մեր կայքը՝ [www.socialsecurity.gov/extrahelp](http://www.socialsecurity.gov/extrahelp):

[www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov)



**Social Security Administration**  
SSA Publication No. 05-10035-AM  
Retirement Benefits (Armenian)  
July 2012